**«Չորրորդ ինքնիշխանությունը» Տիգրան Քոչարյանին պետք է 700 հազար դր. վճարի**

05.05.2013 17:25

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը՝ դատավոր Ալեքսեյ Սուքոյանի նախագահությամբ, այսօր հրապարակել է Տիգրան Քոչարյանն ընդդեմ «Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ-ի կողմից հրատարակվող «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի գործով վճիռը:

Նշենք, որ Տ. Քոչարյանը պահանջում էր պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի դիմաց փոխհատուցել 3.000.000 ՀՀ դրամ, որից 1 մլն դրամ վիրավորանքի, 2 մլն՝ զրպարտության, 500 հազար դրամ՝ փաստաբանական ծախսերի դիմաց:

Դատարանը Տ. Քոչարյանի հայցը բավարարել է մասնակի: Որպես փոխհատուցման գումարը պատասխանող կողմը պետք է վճարի 700 հազար ՀՀ դրամ, որից 200 հազար դրամը՝ որպես փաստաբանական ծախսերի փոխհատուցում:

Բացի այդ, վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո 1 շաբաթվա ընթացքում օրաթերթը պետք է հերքում տպագրի և ներողություն խնդրի զրպարտության ու վիրավորանքի համար:

Տ. Քոչարյանի պաշտպան Ա. Սարդարյանը Aysor.am-ի թղթակցի հետ զրույցում նշեց, որ իրենք թեև դեռ չեն ստացել վճռի պատճեն, սակայն ամենայն հավանականությամբ, չեն բողոքարկի այն, քանի որ դատարանը պարտավորեցրել է հերքում տպագրել:

«Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վահե Հովսեփյանը մեր թղթակցի հետ զրույցում նշեց, որ իրենք բողոքարկելու են այս որոշումը, քանի որ հայցվորի պահանջը արտահայտում է իրենց սուբյեկտիվ կարծիքը:

Աղբյուրը՝ http://aysor.am/am/news/2013/05/03/genproc-tigrankhocharyan/

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })